

«ՀՀ ԳՄ-ԳՇԾՁԲ-2018» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7

«12» «01» 2018թ.
Ժ 10:00

Մասնակցում էին՝

- Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
- Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԳԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/, Վալեր
- Հոդաբաշյան/ԲԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԲԱ/
- Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղդեյան/ՄՀՄ/

1. Քանի որ Կոմիտեի կողմից կարգով սահմանված ժամկետում մասնակցի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի դրույթներով՝

-«Յուրում» ՍՊԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած հայտարարությունը՝ համարել իրականությանը համապատասխանող՝

- 1-ին չափաբաժնով «Յուրում» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ չսահմանելով







Սկսել ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթացը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12.00-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝		Յու. Մուշեղյան
Անդամներ՝		Ա. Զոհրաբյան
		Գ. Խաչատրյան
		Վ. Հոդաբաշյան
		Գ. Մելքոնյան
Քարտուղար՝		Ա. Բաղդեյան